ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՔՆ ԲՀԱՀ-ԾՀԲ-14/06

ք. Երևան «24» հունվարի 2014թ.

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Մասիս Բաղդասարյանի (այսուհետ՝ «Պատվիրատու»), մի կողմից, և «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ն, ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր տնօրեն՝ Ս. Ստեփանյանի (այսուհետ՝ «Կատարող»), մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր»), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ք. Երևանի, *Սարյան 22 հասցեի* շենքի 13-րդ հարկի պատվիրատուի քաղաքաշինական պետական տեսչության Երևանի տարածքային բաժնի կողմից զբաղեցված 356.8մ^2 ընդհանուր մակերեսով տարածքի սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված *տույժը*.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը :

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն *ընդունվում են Պատվիրատուի* և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրմամբ և կատարողի կողմից հարկային հաշվի դուրսգրման եղանակով:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) կամ ներկայացնում համապատասխան հարկային հաշիվ:

3.2 Արձանագրությունն ստորագրվում է կամ հարկային հաշիվն ընդունվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: *Հակառակ դեպքում* պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը կամ հարկային հաշիվը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու *պատճառաբանված* մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 2140800 (երկու միլիոն մեկ հարյուր քառասուն հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, 178400 (մեկ հարյուր յոթանասունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ յուրաքանչյուր ամսվա համար, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները *Կատարողի հաշվարկային հաշվին* փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության կամ հարկային հաշվի հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում): Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է *տուգանք*՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2014 թվականի հունվարի 01-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.4 Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման վերաբերյալ կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

7.5 Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.6 Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի նկատմամբ պահանջը:

7.8 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

7.9 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարագոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2 և 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ու	***Կ ա տ ա ր ո ղ***
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ
Հասցե՝ Կառավարական տուն թիվ 3	Հասցե՝ ք. Երևան, Զաքյան 10
h/h 900011014363, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործադրողական վարչություն	h/h 1570003302070100 «Ամերիաբանկ» ՓԲԸ
հվհհ 02555827	հվհհ 02562123
Մ. Բաղդասարյան	Ս. Ստեփանյան

Կ.Տ.

Կ.Տ.

Հավելված 1
«24» հունվարի 2014 թ. կնքված
N ՀՀ ՔՆ ՓԸԱՀ-Ծ2Ք-14/06
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ ***ՀՀ քաղաքաշինության նախարարություն***

Իրականացվող *01. **ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանում, բաժին 06, խումբ 06, դաս 01***

Ծառայության անվանումը՝ ***Ոչ բնակելի անշարժ գույքի կառավարման հետ կապված սպասարկման ծառայություններ***

h/h	Ծառայության անվանումը	Ծառայության նկարագրությունը
ա	1	2
1.	Ոչ բնակելի անշարժ գույքի կառավարման հետ կապված սպասարկման ծառայություններ	Շենքի. ▪ ջրամատակարարման ու ջրահեռացման (կոյուղի) համակարգերի աշխատանքը, ▪ էլեկտրամատակարարման համակարգի աշխատանքը, ▪ ընդհանուր օգտագործման սանիտարական հանգույցների աշխատանքը, ▪ ընդհանուր օգտագործման տարածքների սանիտարահիգիենիկ պատշաճ պայմանների ապահովումը, ▪ ընդհանուր օգտագործման տարածքների անհրաժեշտ լուսավորության ապահովումը, ▪ ընդհանուր օգտագործման տարածքների (ներառյալ կտուրի և նկուղների) պատշաճ վիճակի ապահովումը, ▪ աղբահանության ապահովումը, ▪ անվտանգության ապահովումը ▪ վերելակների աշխատանքը: Տարածքի ներսում (դրա սահմաններում) Ծառայությունը չի մատուցվելու:
Ծառայության մատուցման ժամկետը՝ շարունակական՝ 12 ամիս:		
Սկիզբը՝ 01 հունվարի 2014թ., ավարտը՝ 31 դեկտեմբերի 2014 թ.		

Պ ա տ վ ի ր ա տ ու՝

ՀՀ քաղաքաշինության նախարարություն

Հասցե՝ Կառավարական տուն թիվ 3
h/h 900011014363, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
hվhh 02565827

Ա. Քարտաշյան

Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ՝

«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ,
հասցե՝ ք. Երևան, Զաքյան 10,
h/h 1570003302070100 «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում
hվhh՝ 02562123

Ս. Ստեփանյան

Հավելված 2
«24» հունվարի 2014 թ. կնքված
N ՀՀՔՀ ԲԸԱՀ-ԾԶԲ-14/06
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ ***ՀՀ քաղաքաշինության նախարարություն***
Իրականացվող ծրագիրը՝ ***01. ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանում, բաժին 06, խումբ 06, դաս 01***
Ծառայության անվանումը՝ Ոչ բնակելի անշարժ գույքի կառավարման հետ կապված սպասարկման ծառայություններ

/հազար դրամ/

Հ/Հ	Ձեռք բերվող ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2014թ.պետական բյուջեից, ըստ ամիսների՝ ընդ որում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
	Ոչ բնակելի անշարժ գույքի կառավարման հետ կապված սպասարկման ծառայություններ	**4216**		178.4	356.8	535.2	713.6	892.0	1070.4	1248.8	1427.2	1605.6	1784.0	2140.8	2140.8

Պ ա տ վ ի ր ա տ ու

ՀՀ քաղաքաշինության նախարարություն

Հասցե՝ Կառավարական տուն թիվ 3
հ/հ 900011014363, ՀՀ ՖՆ աշխատակազմի
գանձապնական վարչություն
հվհհ 02565827

Մ. Բաղդասարյան

Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ

«Պետական գույքի գույքագրման և
գնահատման գործակալություն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Զաքյան 10
հ/հ 1570003302070100 «Ամերիաբանկ» ՓԲԸ
հվհհ 02562123

Ս. Ստեփանյան

Կ.Տ.

Հավելված 3
<<24>> հունվարի 2014 թ. կնքված
N ՀՀ ՔՆ ԲՄԱՀ-ԾՁԲ-14/06
ծածկագրով գնման պայմանագրի

Պատվիրատու	Կատարող
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ
Հասցե՝ Կառավարական տուն թիվ 3	Հասցե՝ ք. Երևան, Զաքյան 10
հ/h 900011014363, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	հ/h 1570003302070100 «Ամերիաբանկ» ՓԲԸ
հվհհ 02565827	հվհհ 02562123

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___»_________ 2014 թ.

Պայմանագրի անվանումը՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___»__________ 2014 թ.

Պայմանագրի համարը՝ __________________________

Պատվիրատուն, ի դեմս՝ ________________________________ ________________________-նի և Կատարողն՝ ի դեմս «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն Ս. Ստեփանյանի, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «___» __________ 2014 թ. կազմված պատասխանատու ստորաբաժանման N ____ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները (այսուհետև՝ Ծառայություն) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը «___» __________ 2014 թ-ից մինչև «___» __________ 2014 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Ծառայությունները

Ծառայության մատուցման համառոտ նկարագիրը	Ծառայության մատուցման քանակական ցուցանիշները	Ծառայության մատուցման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ոչ բնակելի անշարժ գույքի կառավարման հետ կապված սպասարկման ծառայություններ				
Ընդամենը				

Վերոհիշյալ Ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

Ծառայությունն ընդունեց